

# ՅՈՒԼԻՍ 24-ԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ

ԿԸ ՊԱՀԱՆՁՈՒԻ  
KGB-Ի ԱՐԽԻՒՆԵՐԸ ՔՐՔՐԵԼ

Ռազմական գեներալ Վրայ, Երեքշարթի առում (Յուլիս 21) մեր առած լուրերում համաձայն առանձին զնդակոծություններ կային միշտ Կապանի, Վարդենիսի, Սիսիանի շրջանները: Հաթերքի եւ Երեք այլ զիւղերու գրաւումը, զոր դրած էինք մեր նախորդ թիւով արձագանգ դատած էր նաեւ փարիզեան կարգ մը թերթերու մէջ եւ զոհերու տրուած թիւերն ալ նոյնն էին: Լը Մոնտ կ'արձագանգէր նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի մէկ արտաստուածեան, զոր կը վերագրէր «աղաչան ընդդիմութեան բուն ճշունքներուն»: Ի դէպ, այդ նախադասութիւնը՝ «Հայերը նախ պէտք է ազատագրեն Լ. Ղարաբաղը, երաշխաւորեն իր բնակչութեան ապահովութիւնը, ապա միայն խօսին անոր կառուցելու մասին», նորութիւն մը չէր, ոչ ալ յատուկ նոր յայտարարութիւն մը ինչպէս կարծել կու տայ թերթը, քանի նախագահը Կիրակիէն ի վեր Երեւան ալ չէ, այլ քանիցս կրկնուած տեսակէտ մը, զեռեւս այլ ձեւով: Ինչպէս զրեցինք երէկ Լ. Տէր-Պետրոսեան Ուրբաթ, Յուլիս 17-ին կ'այցելէր Վանաձոր (Կիրովական), ուր միայն ելոյթ ունեցած էր:

Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը Յուլիս 20-ին որոշած է արտակարգ նիստ դումարել Յուլիս 24, Ուրբաթ օր, առկախ մնացած հարցերով զբաղելու համար (սեփականաշնորհման օրէնք, նախագահական հրամանագիր Գորիսի շրջանը արտակարգ կացութիւն հռչակող ելն.):

Այժմ ընդդիմութիւնը կը պահանջէ որ անպայման բացուին ՊԱԿ-ի (ԲԱ - ԿԷ - ՊԷ) արխիւները եւ քրքուին որպէսզի ճշդուի թէ ո՞վ ԲԱ - ԿԷ - ՊԷ-ի հետ գործ ունեցած է (յիշենք որ Հ. Յ. Գ. - ն ալ իր մամուլին մէջ «փաստաթուղթ» մը հրատարակեց, 1981, Հոկտեմբեր 27 թրականը կրող, փաստելու համար թէ Լ. Տէր-Պետրոսեան ԲԱ - ԿԷ - ՊԷ-ի անգամ եղած է 1977-էն...) եւ յետագային անոնք որոնք գործ ունեցած են քաղաքական գաղտնի ոտտիկանութեան այդ «հռչակաւոր» կազմակերպութեան մէջ գաղտնի քաշուին: Պարզ է որ այս ալ հետեւանք է նախագահ Տէր - Պետրոսեանի Յունիս 29-ի ելոյթին, որ երանի թէ ժամ առաջ մոռցուէր, ոչ թէ դուր րանար նոր անհամութիւններու: Բայց, ինչո՞ւ այդքան ողջամիտ վարուին մարդիկ, երբ իրենց կեր կը տրուի այսքան անխոհեմ եւ անհեռատես կերպով...:

## ՄԱՄՈՒԼ

«LIBERATION» (21 Juillet)  
HAUT-KARABAGH  
LA GUERRE SALE EN CE JARDIN NOIR

Այս խորագրին տակ, Լիպերասիոն կը խօսի Ղարաբաղի կռիւներուն մասին,

այս անգամ սակայն իր թղթակիցը Ղարաբաղ է, բայց Աղերիններու հետ, ինչ որ կը բացատրէ «սեւ պարտեզը» խորագրին մէջ, որ թրքական թարգմանութիւնն է Ղարաբաղի:

Փիէր Հագան Աղերիններու հետ խօսած է, որոնց համար Ղարաբաղը իրենց հոգն է՝ «depuis la nuit des temps» եւ Չիան կ'ըսէ լրագրողին: «Հորս մեծ-հայրը հոս ծնած է: Եթէ հարկ ըլլայ, ես եւ զաւակներս կը մեռնինք այս հողին համար, զոր Հայերը կ'ուզեն մեր ձեռքէն առնել»: Ու Աղերին կը զարմանայ: «Ինչո՞ւ Ձեր րանսան ծախուած է Ազնուուրին եւ հայկական լուպիին»...:

Հագան Բաբու ալ եղած է, տեսնուած է Ազգ. Ճակատի թիւ երկուքին հետ (Իսրահայիմով) որո համար: «Լ. Ղարաբաղը առաջնահերթ մեր հարցերէն մէկն է միայն: Ամբողջ Պետութիւն մը ունինք կառուցանելիք»: Ուրիշ մը՝ կոտուղ, կը պատմէ պատանդներու փոխանակման «չուկայի» մը մասին: Ամէն մէկ մարդուն արժէքը կը ճշդուի ըստ վառելանիւթի տակառի գինին...: Կառավարութիւնն ալ խոստովաներ է որ չի կրնար հակակռել այս «առեւտուրը», բայց ինչ կը վերարեքի այն ատի մը Հայերէն որոնք իր բանտերուն մէջն են: Ասոնց կարգին տարեց, 60-ը անց այր ու կին մը: Մարդը՝ Նախընթանիկէն զիւղացի մը, կ'ըսէ թէ կը վախնայ զինուորներէն՝ «Տայ ըլլան թէ աղերի»: Հակահայ պոկրումներէն ետք, հիմա ալ հակառուս տըրամադրութիւնները կը ծաւալին, մահուան սպառնալիքներն ալ բազմացած են: Լրագրողը դառն եզրակացութիւն մը ունի: «Սաղաղութի՞ւն: Ամէն մարդ կ'ըսէ քէ ձանձրացած է պատերազմէն եւ մեռելներու իր քափօքէն: Բայց, Հայ եւ Ազգերի ազգայնականութեան բախումէն անդին, Ղարաբաղի կնիւրը մրցակցութեանց գլխաւոր դաշտը դարձած է Թուրքիոյ, Իրանի եւ Ռուսաստանի միջեւ: Այն ատեն, խաղաղութիւնը...»:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹԻՖԼԻՍԻ օդակայանէն բարձրացած ատեն է, որ Տուպուի մը ջախջախուած է մերձաւոր տուներու վրայ: 40 մեռեալ կայ, որոնց 13-ը՝ օդանաւին մէջ, մնացեալն ալ բնակիչներ: Արկածը պատահած է Յուլիս 20-ին, Երկուշաբթի օր:

ՊԱՊԻՆ լայնազիւքէն հանուած ծաւալուն ուղը թէեւ անլուանդ էր, բայց խոր քննութիւն մը ցոյց տուած է որ վտանգաւոր (խլիլդային) կորիզ մը ունէր իր մէջ, որ սակայն տարածուած չէր եւ այժմ բոլորովին չէջքացուած է եւ ամէն ինչ մաքրուած:

ՍՍՐԱՅԵԻՑ աշխարհէն բոլորովին կըտրուած էր Յուլիս 20-ին եւ օդակայանն ալ փակուած: Հրադադարը, որ ստորագրուած էր Լոնտոն եւ պիտի գործադրուէր Կիրակի, Յուլիս 19, ժամը 18-էն չսկսած իսկ խախտուած էր եւ աւելի սաստկացած էին կռիւները վարչապետ, Միլան Փանիքի Սարայեւօ այցելութենէն քիչ ետք: Յուլիս 21-ին, օդակայանը վերարացուած էր:

ՓԱԼԵՐՄՈՅԻ մէջ ցոյցերը մեծ ծաւալ առած են մաֆիային դէմ, առանց սակայն զրական հետեւանքներու: Դատաւոր Պորսելլինոյի ընտանիքը մերժեց պաշտօնական յուղարկաւորութիւն մը, իրրեւ բողոք իշխանութեան դէմ եւ Հոռոմէն միայն Հանրապետութեան նախագահն է՝ Սքալֆարօ, որ պիտի կարենայ յուղարկաւորութեան ներկայ ըլլալ: Ծանօթ է որ մաքուր մէկն է եւ որեւէ կապ չունի մաֆիային հետ: Մաֆիայի նոր անուանումն է՝ Հասարակապետութեան 13-րդ Պետութիւնը:

ՎԻԿՏՈՐ ԼՈՒԻ Երբեմնի շատ ծանօթ

## ՕՐԸ ՕՐԻՆ

## ՑԵՒԸ

Ամառնային տեղատարափ մը չէ, այլ իսկական ցեխ մը որ սկսած է հոսիլ մեր մտնուիլին մէկ կարեւոր մասին մէջ, Երեւանէն մինչեւ Լոս - Անճելոս: Հեղեղը յորդեցաւ այն դժբախտ օրուրէն ասդին երբ Հայաստանի Նախագահը ինքն իրեն արտօնեց անորակելի ելոյթ մը: Կարծէք այդ սայրափումը բաւարար չէր ինքնին մեր քաղաքական մարդոց համար, որպէսզի գգաստանային, քանի որ պետութեան գերագոյն պաշտօնին այս տատանումը կը վտանգէր պահ մը, մեր մտքին, ամբողջ վարչական մեքենան եւ ասոր խորհրդանշականութիւնը, անաւասիկ ընդդիմութեան պատկանող քերթերը իրենց զինանոցներէն հանեցին բառապաշար մը ու ռազմավարութիւն մը որոնց գոյութիւնը մոռցած էին շատեց:

Օր չանցնիր որ չիրաւցուին մեզի լուսանկներու, մեղադրութեանց, ամբաստանութիւններու գարմանագան տեսակներ, փաստաբուրդեր առանել կամ նուազ կեղծ, ցանկեր, մատուցութիւններ, հրապարակային մերկացումներ: (Ես նուազ կատի չեմ կրնար առնել տակաւին շշուկները կուրի մակատներէն եկող, ուր նոյնպիսի կացութիւն կը տիրէ եղեր սա միակ տարբերութեամբ որ այնտեղ հաշուեյարդարի միջոցները կը հասնին... կազմակերպուած սպանութեանց): Երբեք չէի խորհած որ մեր մէջ կան այսքան մեծ թիւով լրտեսներ, գործակալներ, դիմաւորներ, ասոր անոր ծախուած շահամուկներ: Դուն ասոր մարդն ես, իսկ դուն անոր մարդն ես: Աղտոյտութեան այս մակընթացումը ախտաբանական է հայ քաղաքական կաշուած սպարէզին համար, հալածախտին, մեծամուրթեան մէկ տարբերակը, իբրեւ թէ ըլլայինք աշխարհին պարտը:

Ասիկա պիտի փոխութային արժէք մը ունենար, եթէ պարզուած պատկերը ոչ այնքան ազգային պատակուումի մը նշան

լրագրողը մեռած է Լոնտոն 64 տարեկանին: Մինչեւ Գորբաչովի գալուտը կիսապաշտօնական «տեղեկատուն» եւ «սպանելակատուն» էր դէպի Արեւմուտք կատարուելիք լրատուութեան: Ռուսաստան հաստատուած հրեայ Ֆրանսացիի մը թոռն էր: 1948-ին ստալինեան հակահրեայ արշաւին ատեն, դուրազ զրկուած էր լրտեսութեան մեղադրանքով: Սոլթենիցիի «Կազինոն եւ հորթը» գործին մէջ, հեղինակը զինքը կ'ամբաստանէ որպէս «երեւելի մատնիչ» արդելափակման տարիներուն ընթացքին:

ԼԻԲԱՆԱՆԻ քրիստոնեայ հոսանքները կոչ ըրած են որ ընդհանուր գործադուլ ըլլայ երկրին մէջ, Հինգշաբթի օր, Յուլիս 23-ին, բողոքելու համար սուրիամէտ կառավարութեան որոշած երեսփոխանական ընտրութիւններուն դէմ: Լիրանանեան ուժերու նախկին քաղաքագործը (Ժաթա), Լիրանանի ազատագրման համաշխարհային ձախտ (Առն) եւ Ռէմոն Էտտէի ազգ. Պըքը առանձին առանձին կոչ ըրած են գործադուլի: Քրիստոնեայ երեք կուսակցութիւններուն համար երեսփոխանական ընտրութիւններ ընել ի ներկայութեան օտար (սուրիացի, իսրայելացի) գործերու եւ առանց իսկ ընտրողներու մէկ երրորդի մասնակցութեան բացարձակապէս անտեղի է:

ՊԵՐՆԱՐ ՔԷՍԷՃԵԱՆ, որ Ռուլան Տիւմայի զբասնեակի պետն էր եւ «վճարեց» Հապաչի հարցին հաշուեցայցը, որ թերեւս իրը չէր, Ֆրանսայի դեսպան նշանակուեցաւ Ալթերիա: